Հավելված 2

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ (ՆԱԽԿԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲԸ)

# ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Բուսական աշխարհ

Սյունիքի մարզում Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում հնարավոր ազդեցություն կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի ելակետային տվյալների մշակման ժամանակ տեղեկատվությունը ստացվել է բնության պահպանման և պաշտպանության մասին ՀՀ օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից, ինչպես նաև կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ միջազգային այլ քաղաքականություններից և չափորոշիչներից:

Ուսումնասիրվել է տարածքի կենսաբազմազանությունը, նշվել են այն էկոհամակարգերը, որոնք կարող են Ծրագրի ազդեցությունը կրել, ինչպես նաև պարզվել են հետևյալ տարրերի հնարավոր առկայությունը՝

* Բնության պահպանության օրենսդրորեն պաշտպանվող տարածքները, որոնք գտնվում են Ծրագրի հնարավոր ազդեցության գոտում, և այն տարածքները, որոնք միջազգայնորեն ճանաչված են որպես մեծ կենսաբազմազանություն ունեցող տարածքներ, ներառյալ Կենսաբազմազանության կարևորագույն տարածքները, Էնդեմիկ թռչունների տարածքները և կարևորագույն թռչնաբանական տարածքները (ԿԹՏ):

* ՀՀ-ում պաշտպանվող տեսակները (գրանցված են ՀՀ Կարմիր գրքում):

* Այն տեսակները, որոնք ըստ մասնագետների համարվում են վտանգի եզրին գտնվող կամ ՀՀ-ում կամ տարածաշրջանում դրանք նվազում են, ինչի պատճառով Ծրագրի ազդեցության տարածքը կարող է համարվել առանցքային բնական կենսամիջավայր:

* Տեսակներ, որորոնք Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) կողմից ընդգրկվել են համաշխարհային և եվրոպական մակարդակով Անհետացման կամ Ծայրահեղ անհետացման ցուցակներում:

* Բնական կենսամիջավայրեր կամ էկոհամակարգեր, որոնք կարող են համարվել «կրիտիկական»:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական դաշտ

Կենսաբազմազանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներառում է բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենսգրքեր ու օրենքներ:

1. Հայաստանի Հանրապետության օրենսգրքերը՝

- Անտառային օրենսգիրք
- Հողային օրենսգիրք
- Ջրային օրենսգիրք
- Ընդերքի մասին օրենսգիրք
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
- Քրեական օրենսգիրք
- Քաղաքացիական օրենսգիրք

2. Հայաստանի Հանրապետության օրենքները՝

- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին
- Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին
- Բնապահպանական վերահսկողության մասին
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին
- Բուսական աշխարհի մասին
- Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին
- Կենդանական աշխարհի մասին.
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին
- Որսի և որսորդական տնտեսության վարման մասին

Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերը

Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ, 1991 թվականից սկսած, միացել է կենսաբազմազանության պահպանության մի շարք միջազգային համաձայնագրերի, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական համաձայնագրեր (կոնվենցիաներ և դրանց արձանագրություններ), որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների

կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

- ՄԱԿ-ի <<Կենսաբանական բազմազանության մասին>> կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թ-ին:

- <<Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին>> կոնվենցիա (Բեռն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:

- <<Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա>> (Ֆլորենցիա, 2000 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2003 թվականին:

- <<Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին>> կոնվենցիա (Բոնն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2010 թվականին:

- <<Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին>> կոնվենցիա (Վաշինգտոն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:

- <<Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր>> կոնվենցիա (Ռամսար, 1971թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:

- ՄԱԿ-ի <<Անապատացման դեպ պայքարի>> կոնվենցիա (Փարիզ, 1994 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1997 թ-ին:

- ՄԱԿ-ի <<Կլիմայի փոփոխության մասին>> շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:

- ՄԱԿ-ի ԵՏՀ <<Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին>> կոնվենցիա (Էսպո, 1991 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1997 թվականին:

- ՄԱԿ-ի ԵՏՀ <<Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> կոնվենցիա (Օրհուս, 1998 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2001 թվականին:

- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:

Կենսաբազմազանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներառում է նաև պետական արգելոցների, ազգային պարկերի, արգելավայրերի ստեղծման և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, պետական արգելոցների, ազգային պարկերի կառավարման պլանները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ.

1. Բնօգտագործման դրույքաչափերի մասին (1998 թ. դեկտեմբերի 30-ի № 864 որոշում):

2. Բնության հատուկ պահպանվող տարածքներում մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին (2007 թ. օգոստոսի 30-ի № 1044-Ն որոշում):

3. Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին (2008 թ. մարտի 20-ի № 259-Ն որոշում:

4. Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը սահմանելու մասին (2009 թ. հունվարի 22-ի № 72-Ն որոշում):

5. Բուսական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին (2009 թ. հունվարի 22-ի № 120 –Ն որոշում):

6. Կենդանական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին (2009 թ. հունվարի 22-ի № 121–Ն որոշում):

7. Բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին (2009 թ. հուլիսի 23-ի № 831–Ն որոշում):

8. Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին (2009 թ. հուլիսի 23-ի № 832 –Ն որոշում):

9. Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագիրը հաստատելու մասին (2009 թ. օգոստոսի 13-ի № 974 –Ն որոշում):

10. Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական հաշվառման ծրագիրը հաստատելու մասին (2009 թ. օգոստոսի 13-ի № 975 –Ն որոշում):

11. Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական կադաստրի զարգացման 2010–2015 թվականների համալիր ծրագրին հավանություն տալու մասին (2009 թ. օգոստոսի 13-ի № 33 արձանագրային որոշում):

12. Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական կադաստրի զարգացման 2010–2015 թվականների համալիր ծրագրին հավանություն տալու մասին (2009 թ. օգոստոսի 13-ի № 34 արձանագրային որոշում):

13. <<Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին>> կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերը ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների (հավաստագրերի) տրամադրման կարգը և թույլտվության (հավաստագրի) ու հայտի ձևերը հաստատելու մասին (2009 թ. հոկտեմբերի 22-ի № 1281–Ն որոշում):

14. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին (2010 թ. հունվարի 29-ի № 71–Ն որոշում):

15. Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին (2010 թ. հունվարի 29-ի № 72–Ն որոշում):

16. Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին (2010 թ. հունիսի 3-ի № 668–Ն որոշում):

17. Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011–2012 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին (2011 թ. մարտի 24-ի № 308–Ն որոշում):

18. Հայաստանի Հանրապետության անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների կողմից ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակներով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման համար բնօգտագործման վճարի գծով արտոնություն սահմանելու մասին (2011 թ. օգոստոսի 27-ի № 1535–Ն որոշում):

19. Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին (2011 թ. նոյեմբերի 10-ի № 1594- Ն որոշում):

20. Հայաստանի Հանրապետությունում 2012–2014 թվականների անտառների պետական մոնիթորինգի իրականացման ծրագրին հավանություն տալու մասին մասին (2012 թ. մարտի 7-ի № 9 արձանագրային որոշում):

21. Հայասստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությունը և դրանից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումներին հավանություն տալու մասին (2012 թ. հուլիսի 19-ի № 29 արձանագրային որոշում):

22. Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին (2014 թ. սեպտեմբերի 25-ի № 1059-Ա որոշում) և այլն:

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների շրջանակներում՝ Հայաստանը հրատարակել է «Հայաստանի կենսաբազմազանություն. Առաջին ազգային զեկույց»-ը և մշակել է «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը: Դրան հաջորդել են հերթական ազգային զեկույցներ՝ թվով վեց զեկույց:

## ԲՀՊՏ-ներ Սյունիքի մարզում

## Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները

Հայաստանի Հանրապետության կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1465-Ն որոշմամբ «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի եվ «Արևիկ» ազգային պարկ ՊՈԱԿ-Ի միաձուլումից ստեղծվեց «Զանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ, որը իրականացնում է պահպանության աշխատանքներ 79660.5հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ ներառելով իր մեջ 7 մասնաճյուղեր՝ «Շիկահող» պետական արգելոց – 12137 հա, «Զանգեզուր» պետական արգելավայր – 25870.64 հա, «Արևիկ ազգային պարկ» - 30353.8 հա, «Սոսու պուրակ» պետական արգելավայր» – 64.2 հա, «Խուստուփ» պետական արգելավայր» - 6946.7հա, «Բողաքար» պետական արգելավայ» - 4048 հա, «Սև լիճ» պետական արգելավայր» – 240.1 հա

**«Շիկահող» պետական արգելոց**. «Շիկահող» պետական արգելոց» տեղամասը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Խուստուփ լեռան հարավ արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերին Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700-2800մ բարձրություններում: Այն հիմնվել է 1958 թվականին: Տարածքը կազմում է մոտ 12137հա: Կազմավորվել է կաղնու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով: Բուսական աշխարհը ներկայացված է բարձրակարգ բույսերի 432 ցեղի և 92 ընտանիքի 1100 տեսակներով, որոնցից 70-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

**«Զանգեզուր» արգելավայր.** «Զանգեզուր» արգելավայրը ստեղծվել է 2009թ. հոկտեմբերի 15-ին (ՀՀ կառավարության N1187-Ն որոշում) և հանդիսանում է նոր պահպանվող տարածքներից մեկն է, որի նպատակն է ապահովել Սյունիքի մարզի

Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և 63 մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն: Արգելավայրի տարածքը կազմում է 17369 հա:

**«Արևիք ազգային պարկ».** «Արևիք» ազգային պարկը ստեղծվել է 2010թ: Ազգային պարկի տարածքում ներկայացված են լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Տարածքը կազմում է շուրջ 30353.8հա: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները:

**«Սոսու պուրակ».** արգելավայր «Սոսու պուրակ» արգելավայրը իր մեջ ներառում է արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը: Այն ստեղծվել է 1958 թ. և այժմ զբաղեցնում է 64.2 հա տարածք: Շնորհիվ ցածր ռելիեֆի, արգելավայրի կլիման մեղմ է ու բավականին տաք: Ձնածածկը ձևավորվում է ոչ ամեն տարի, արագ հալվում է և հասնում ոչ ավել, քան 10 սմ: Պուրակի հիմքում ընկած են 200-250-ամյա հազարից ավել ծառեր, որոնք հասնում են 30-35մ բարձրությանը և պահպանվել են մինչ այժմ: Բացի սոսուց, այստեղ աճում են նաև այլ արժեքավոր և հազվագյուտ տեսակներ՝ հունական ընկուզենին, արաքսյան կաղնին, հունական շրջահյուսը, թավշային իլենին և այլն:

«**Խուստուփ» պետական արգելավայր**». «Խուստուփ» պետական արգելավայրը զբաղեցնում է 6946.74հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորրության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: «Խուստուփ» պետական արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորրության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

**«Բողաքար»պետականարգելավայր».** Կազմավորվել է 1989թ-ին, ունի 4048հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային

լանջերին՝ 1400-2100մ բարձրություններում: Ստեղծվել է՝ բուսական աշխարհի ու կենդական աշխարհի էնդեմիկ (Սոսնովսկու վարդկակաչ, Թախտաջյանի խլածաղիկ և այլն) և հազվագյուտ (խոլորձներ, արաքսյան կաղնի, սագասոխուկ) տեսակների պահպանության նպատակով:

**«Սև լիճ» արգելավայր.** Սև լիճը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռնաստորոտի խառնարանային մասում՝ 2658 մ բարձր. վրա: Անհոսք քաղցրահամ լիճ է, որը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, որոնք լցվել են լեռան խառնարանը: Լիճը շրջապատող տարածքը ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները, 102 տիպի անոթավոր բույսերն ու ալպյան գոտու բուսական և կենդանական համակեցություններ:

**«Գորիսի արգելավայր».** Կազմավորվել է 1972-ին, ունի 1850 հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2800 մ բարձրություններում: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ) պահպանության նպատակով:

Դաստակերտի հանքի համար հայցվող տարածքի սահմանը գտնվում է «Զանգեզուր» արգելավայրի դեպի արևելք գտնվող հատվածից 3,8 կմ, միսկ դեպի արևմուտք գտնվող հատվածից 2 կմ հեռավորության վրա:



Դաստակերտի հանքավայրի համար հայցվող տարածքի դիրքադրությունը «Զանգեզուր» պետական արգելավայրի հանդեպ







ՀՀ Սյունիքի մարզում Բնության հուշարձանների ցանկ ըստ

ՀՀկառավարության 2008 թվականի 14 օգոստոսի Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին N 967-Ն որոշմամբ հաստատված

| | | | |
|---|---|---|---|
| 1. | «Սատանա» բնական քանդակ | **<u>ՀՀ Սյունիքի մարզ</u>**<br>Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում | Երկրաբանական հուշարձան |
| 2. | «Անանուն» ժայռ-մնացուկներ | Գորիս քաղաքի շրջակայքում | Երկրաբանական հուշարձան |
| 3. | «Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր | Սիսիան քաղաքի հս-արլ. եզրին | Երկրաբանական հուշարձան |
| 4. | «Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր | Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ., Ողջի գետի ձախ ափին | Երկրաբանական հուշարձան |
| 5. | «Մալևի ինտրուզիա» ներժայթուկ | Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս., լքված Մալև գյուղի մոտ | Երկրաբանական հուշարձան |
| 6. | «Անանուն» ապարների մերկացումներ | Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում | Երկրաբանական հուշարձան |
| 7. | «Խորձոր» V-աձև կիրճ | Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ. | Երկրաբանական հուշարձան |
| 8. | «Անանուն» էրոզիոն ռելիեֆ | Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, երձոր տանող ճանապարհի ձախ կողմում | Երկրաբանական հուշարձան |
| 9. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Հալիձոր գյուղից 2 կմ արմ., Որոտանի կիրճում | Երկրաբանական հուշարձան |
| 10. | «Անանուն» ապլիտային դայկաներ | Կապան քաղաքից 30-35 կմ հվ. | Երկրաբանական հուշարձան |
| 11. | «Հերթ» որմնաքանդակ | Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ., «Շաքի» ջրվեժի մոտ | Երկրաբանական հուշարձան |
| 12. | «Փղի ճտեր» որմնաքանդակ | Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ., «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին | Երկրաբանական հուշարձան |

| | | | |
|---|---|---|---|
| 13. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Որոտան գյուղի հվ-արմ. եզրին | Երկրաբանական հուշարձան |
| 14. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Որոտան գյուղի հվ-արմ. եզրին | Երկրաբանական հուշարձան |
| 15. | «Շիշքար» (բաղաքար) դայկա | Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում | Երկրաբանական հուշարձան |
| 16. | «Անանուն» բուրգանման մնացուկներ | Վերիշեն գյուղից 2 կմ հս., Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում | Երկրաբանական հուշարձան |
| 17. | «Սատանի կամուրջ» բնական կամուրջ | Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ. | Երկրաբանական հուշարձան |
| 18. | «Բնական թունել» | Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա | Երկրաբանական հուշարձան |
| 19. | «Ագարակի» բրածո ֆլորա | Ագարակ քաղաք | Երկրաբանական հուշարձան |
| 20. | «Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա | Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա | Երկրաբանական հուշարձան |
| 21. | «Ջրաղացի» աղբյուրներ | Անգեղակոթ գյուղի հվ-արմ. մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 22. | «Ծործոր» աղբյուրներ | Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 23. | «Վարդանածորի» աղբյուրներ | Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ., Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160մ ներքև | Ջրաերկրաբանական հուշարձան |

| | | | |
|---|---|---|---|
| 24. | «Սմուլի» աղբյուր | Անգեղակոթ գյուղից հվ-արլ. մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 25. | «Անապատի» աղբյուր | Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 26. | «Ջրաղացի» աղբյուր | Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ., ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 27. | «Սևջուր» աղբյուր | Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս. ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 28. | «Արքայից» աղբյուր | Դավիթ Բեկ գյուղի հս. ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 29. | «Քյահրիզ» աղբյուր | Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ., ծ.մ-ից 670 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 30. | «Անանուն» աղբյուր | Շաքի գյուղի հս-արմ. ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 31. | «Մեծ Նավի» աղբյուր | Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ., ճամփեզրին, խաչքարի մոտ | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 32. | «Որոտան» աղբյուր | Որոտան գյուղի հս. ծայրամասում | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 33. | «Կաթնաղբյուր» աղբյուր | Տանձավեր գյուղի հվ-արմ. ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 34. | «Սպիտակջուր» աղբյուր | Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |

| | | | |
|---|---|---|---|
| 35. | «Շռան» աղբյուր | Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ., ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 36. | «Ներքին» աղբյուր | Քարահունջ գյուղի հվ. մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 37. | «Ծաղկարի» լիճ | Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ., ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 38. | «Կապուտան» (Գոգի) լիճ | Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ., ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 39. | «Անտակ» լիճ | Սյունիքի մարզ, Բռնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ. | Ջրագրական հուշարձան |
| 40. | «Գազանա» լիճ | Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ., ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 41. | «Կապույտ» լիճ | Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ. | Ջրագրական հուշարձան |
| 42. | «Բերդալիճ» լիճ | Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ., ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 43. | «Կապուտջուղ» ջրվեժներ | Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ., Կապուտջուղ գետակի վրա | Ջրագրական հուշարձան |
| 44. | «Շինուհայր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ. | Ջրագրական հուշարձան |

| | | | |
|---|---|---|---|
| 45. | «Աղվան» ջրվեժ | Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալև գետակի, լքված Մալև գյուղից 2.0 կմ հվ-արմ. | Ջրագրական հուշարձան |
| 46. | «Վարդանիձոր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ., Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա | Ջրագրական հուշարձան |
| 47. | «Աջիբաջ» ջրվեժ | Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ. | Ջրագրական հուշարձան |
| 48. | «Շաքի» ջրվեժ | Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա | Ջրագրական հուշարձան |
| 49. | «Պառավաձոր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ. | Ջրագրական հուշարձան |
| 50. | Ս. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ., Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ | Բնապատմական հուշարձան |
| 51. | Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ | Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ., Երիցավանքի շրջակայքում | Բնապատմական հուշարձան |
| 52. | «Որոտան» բնապատմական համալիր | Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ. եզրին աջ ու ձախ ափերին | Բնապատմական հուշարձան |
| 53. | Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ | Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ. մասում, Վարարակ գետի ձախ ափին | Բնապատմական հուշարձան |
| 54. | «Մեղրիի սոսի» | Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի | Կենսաբանական հուշարձան |
| 55. | «Շիբլյակ» | Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա | Կենսաբանական հուշարձան |

| | | | |
|---|---|---|---|
| 56. | «Սֆագնումային մամուռներ» | Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս., Որոտանի լեռնանցքի մոտ | Կենսաբանական հուշարձան |
| **Ընդամենը՝ ՀՀ Սյունիքի մարզում՝ 56** | | | Երկրաբանական – 20<br>Ջրաերկրաբանական–16<br>Ջրագրական – 13<br>Բնապատմական- 4<br>Կենսաբանական - 3 |

Բնության վերը նշված հուշարձանները գտնվում են Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքից բավականին հեռավորության վրա և իրենց վրա չեն կրելու բացասական ազդեցություն:

### Բուսաբանական հետազոտության եղանակները և մեթոդները

Ծրագրի ազդեցության տարածքում բուսականության տիպերը բացահայտվել և դասակարգվել են դաշտային հետազոտությունների արդյունքում: Դաշտային հետազոտությունը կատարվել է երկրահետազոտության դասական եղանակով՝ երթուղային և կիսաստացիոնար, հետազոտվող տարածաշրջանը պայմանականորեն բաժանվել է ըստ հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելու տեղանքի ռելիեֆը և լանդշաֆտը: Տրվել է բուսականության նկարագրությունը: Հետազոտության ընթացքում կատարվել են հանդիպող բուսատեսակների գրանցում և թվային լուսանկարում: Եթե դաշտային պայմաններում հնարավոր չի եղել որոշել բուսատեսակը, վերցվել է բուսատեսակը ամբողջական, կամ բույսի առանձին օրգանների նմուշներ՝ լաբորատոր պայմաններում այն ուսումնասիրելու նպատակով: Տվյալների վերլուծության ժամանակ օգտագործվել են Ա.Ի. Տոլմաչովի (1941, 1970) և Լ.Ի. Մալիշևի (1975, 1987) կողմից առաջադրված ֆլորայի քանակական վերլուծության մեթոդները: Տեսակների որոշումը և անվանումների ճշգրտումը կատարվել է Հայաստանի ֆլորայի 11 հատորներով (Флора Армении, 1954-2010), բույսերի գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995), ուսումնասիրվել են մի շարք լրացուցիչ աշխատություններ, մասնագիտական գրականություն, դաշտից վերցված նմուշները համեմատվել են ՀՀ ԳԱԱ Ա.Լ. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի բուսապահոցում (ERE) առկա բուսանմուշների հետ: Հազվագյուտ և անհետացող տեսակների կարգավիճակը ճշտվել է ըստ Հայաստանի բույսերի Կարմիր Գրքերի (2010):

## Տարածքի տեղադրությունը

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջերին, Դաստակերտ համայնքից 400-600մ դեպի արևմուտք, հարավ և հարավ արևելք: Ըստ ՀՀ ֆլորիստիկ շրջանների բաժանման (Ա.Լ. Թախտաջյան, 1954), տարածքը ներառված է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում: Տարածքը գտնվում է մոտավորապես 1890-2730 մ բացարձակ բարձրությունների վրա:




**Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները**




(Ըստ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, Հինգերորդ ազգային զեկույց: Երևան, 2014թ.)

## Հայցվող տարածքի բուսականության տիպերը

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում զոնալ բուսականության տիպերից առկա են մարգագետնատափաստանները, դաշտավլուկազգի և տարախոտա-դաշտավլուկազգի ենթալպյան մարգագետինները: Ազոնալ ներկայացված է պետրոֆիլ բուսականությունը ժայռային բացվածքների և քարաթափուկների վրա, ինչպես նաև ջրաճահճային բուսականությանը տարածքում հոսող Այրիգետի վտակ հանդիսացող Կոշկոշտի և Դաստակերտ գետերի ափերին: Ուսումնասիրվող տարածքում անտառներ չկան, դենդրոֆլորան ներկայացված է  գիհու, սալորենու, տանձենու, սզնու, մասրենու բուսուտներով:



Մերձալպյան մարգագետիններ




մարգագետնատափաստաններ




Դենդրոֆլորայի մացառուտներ լեռնալանջերին




Պետրոֆիլ բուսականության

 

Ափամերձ և ջրաճահճային բուսականություն

Տարածքում հանդիպող բուսատեսակների ցանկը

**ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ**

**EQUISETOPHYTA - ՁԻԱՁԵՏԵՐ**

**Equisetaceae - Ձիաձետազգիներ**

Equisetum arvense L. - Ձիաձետ դաշտային

Equisetum ramosissimum Dsf. - Ձիաձետ ճյուղավոր

**PTEROPHYTA - ՊՏԵՐՆԵՐ**

**Aspleniaceae -Ասպլենազգիներ**

Asplenium septentrionale (L.) Hoffm. - Ասպլեն հյուսիսային

**Dryopteridaceae - Վահանապտերազգիներ**

Dryopteris filix-mas (L.) Shott. - Վահանապտեր արական

**GYMNOSPERMAE - ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ**

**Cupressaceae - Նոճազգիներ**

Juniperus oblonga Bieb. - Գիհի երկարատերև

**ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ**

**Alliaceae - Սոխազգիներ**

Allium atroviolaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն

Allium pseudostrictum Albov - Սոխ կեղծ ցցված

**Amaranthaceae - Հավակատարազգիներ**

Amaranthus retroflexux L. - Հավակատար սովորական

**Apiaceae - Հովանոցազգիներ**

Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղագազար արևելյան

Chaerophyllum aureum L. - Շուշանբանջար ոսկեգօծ
Eryngium billardieri Delaroche - Երնջնակ Բիլարդեի
Falcaria vulgaris Bernh. - Սիբեխ սովորական
Heracleum schelkovnikovii Woronow - Բալդրղան Շելկովնիկովի
Prangos ferulacea (L.) Lindl. - Պրանգոս նարդեսանման

**Asteraceae - Բարդածաղկավորներ**

Achillea millefolium L. - Հազարատերևուկ սովորական
Aetheopappus pulcherrimus (Willd.) Cass. - Երկնափուփուլ գեղեցկագույն
Anthemis iberica Bieb. - Անթեմ իբերիական
Anthemis triumfettii (L.) All. - Անթեմ Տրիումֆետիի
Arctium lappa L. - Կռծռծ, Կռատուկ երեսնակ
Artemisia absinthium L. - Օշինդր դառը
Artemisia splendens Willd. - Օշինդր փայլուն
Carduus nutans L. - Տատասկափուշ խոնարհված
Centaurea cheiranthifolia Willd. - Տերեփուկ դեղնամանուշակագույն
Centaurea salicifolia Bieb. - Տերեփուկ ուռատերև
Centaurea solstitialis L. - Տերեփուկ արևային
Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական
Cirsium aduncum Fisch. et C.A. Mey. ex DC. - Գեղավեր, Տատասկ կեռանման
Cirsium echinus (Bieb.) Hand.-Mazz. - Գեղավեր, Տատասկ ասեղնավոր
Cirsium obvallatum (Bieb.) Fisch. - Գեղավեր, Տատասկ պարուրված
Cirsium tomentosum C.A. Mey. - Գեղավեր, Տատասկ թաղիքավոր
Cousinia cynaroides (Bieb.) C.A. Mey. - Խոզանափուշ կանգկուրանման
Cousinia gigantolepis Rech. fil. - Խոզանափուշ խոշորաթեփուկ
Crepis foetida L. - Ջամբյուղախոտ գարշահոտ
Crepis sahendi Boiss et Buhse - Ջամբյուղախոտ սահենդյան
Doronicum oblongifolium DC. - Դարունաճ, Դորոնիկում երկարատերև
Echinops pungens Trautv. - Թուփփուշ, Ոզնագլխիկ փշոտ
Echinops sphaerocephalus L. - Թուփփուշ, Ոզնագլխիկ գնդագլխիկավոր
Erigeron acer L. - Գարնանաթարամ կծու
Erigeron venustus Botsch. - Գարնանաթարամ գեղեցիկ
Grossheimia macrocephala (Muss.-Puschk. ex willd.) Sosn. et Takht. - Գրոսհեյմիա խոշորագլուխ
Helichrysum graveolens (Bieb.) Sweet - Անթառամ բուրավետ
Helichrysum plicatum DC. - Անթառամ ծալքավոր
Hieracium cymosum L. - Ճուռակախոտ հովանոցանման
Hieracium murorum L. - Ճուռակախոտ ժայռային
Hieracium pilosella L. - Ճուռակախոտ մազմզոտ
Hieracium umbellatum L. - Ճուռակախոտ հովանոցավոր
Hieracium virosum Pall. - Ճուռակախոտ թունավոր
Inula helenium L. - Կղմուխ մեծ

Inula oculus-christi L. - Կղմուխ ակնավոր
Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց
Lapsana grandiflora Bieb. - Խարբուկ խոշորածաղիկ
Leontodon hispidus L. - Առյուծատամ խոզանավոր
Picris hieracioides L. - Գինեղեգ, Դառնիճ ճուռակախոտանման
Podospermum meyeri C. Koch. - Սերմնոտուկ Մեյերի
Scorzonera rigida Auch. ex DC. - Խինձ կոշտ
Senecio integrifolius (L.) Clairv. - Հալևորուկ ամբողջատերև
Solidago virgaurea L. - Ոսկեշիվ սովորական
Tanacetum balsamitoides (Nabel.) Chandjian - Տարկավան, Լվածաղիկ բալզամակիրանման
Tanacetum chiliophyllum (Fisch. et C.A. Mey. ex DC.) Sch. Bip. - Տարկավան, Լվածաղիկ հազարատերև
Tanacetum parthenium (L.) Sch. Bip. - Տարկավան, Լվածաղիկ կուսատերև
Taraxacum bessarabicum (Hornem.) Hand.-Mazz. - Խատուտիկ բեսարաբիական
Taraxacum montanum (C.A. Mey.) DC. - Խատուտիկ լեռնային
Taraxacum stevenii DC. - Խատուտիկ Ստեվենի
Tragopogon reticulatus Boiss. et Huet - Այծեմորուս, Սինձ ցանցավոր
Xeranthemum squarrosum Boiss. - Չորաբույս, Անմեռուկ չռված

**Boraginaceae -Գաղտրիկազգիներ**

Cerinthe minor L. - Մոմախոտ փոքր
Echium vulgare L. - Իժախոտ սովորական
Myosotis alpestris F.W. Schmidt. - Անմոռուկ ալպեստրիս
Myosotis sylvatica Ehrh. ex Hoffm. - Անմոռուկ անտառային
Onosma setosa Ledeb. - Իշհոտոտ խոզանավոր

**Brassicaceae - Խաչածաղկավորներ**

Alyssum desertorum Stapf. - Վառվռուկ անապատային
Alyssum persicum Boiss. - Վառվռուկ պարսկական
Alyssum tortuosum Waldst. et Kit. ex Willd. - Վառվռուկ, Փարա-փարա-ավել
Arabis caucasica Schlecht. - Արաբախոտ կովկասյան
Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծտապաշար, Հովվամաղախ
Draba bruniifolia Stev. - Ճարտարուկ ծործորակատերև
Erysimum gelidum Bunge - Ձագախոտ սառը
Lepidum latifolium L. - Նվարդակ լայնատերև
Nasturtium officinale R. Br. - Ջրկոտեմ դեղատու
Thlaspi arvense L. - Շնկոտեմ դաշտային
Thlaspi perfoliatum L. - Շնկոտեմ թափանցված

**Campanulaceae - Զանգակազգիներ**

Campanula aucheri A. DC. - Զանգակ Օշեի
Campanula glomerata L. subsp. caucasica (Trautv.) Oganesian - Զանգակ խմբված ե/տ կովկասյան

Campanula stevenii Bieb. subsp. stevenii - Զանգակ Ստևենի

**Caprifoliaceae - Ցախակեռասազգիներ**

Viburnum lantana L. - Գերիմաստի

**Caryophyllaceae - Մեխակազգիներ**

Cerastium elbrusense Boiss. - Ճռճռուկ էլբրուսի

Dianthus cretaceus Adams - Մեխակ կավճային

Arenaria gypsophiloides L. - Որմնաբույս սապնարմատանման

Gypsophila tenuifolia Bieb. - Սապնարմատ նեղատերև

Minuartia imbricata (Bieb.) Woronow - Մինուարցիա կղմինդրաձև

Silene caucasica (Bunge) Boiss. - Ծվծվուկ կովկասյան

Silene ruprechtii Schischk. - Ծվծվուկ Ռուպրեխտի

**Chenopodiaceae - Թելուկազգիներ**

Atriplex turcomanica F. et M. - Թաղ թուրքմենական

Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/

Chenopodium foliosum Aschers. - Թելուկ բազմատերև

**Convolvulaceae - Պատատուկազգիներ**

Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային

**Crassulaceae - Թանձրատերևազգիներ**

Sedum caucasicum (Grossh.) A. Bor. - Թանթռնիկ կովկասյան

Sedum oppositifolium Sims. - Թանթռնիկ հակադրատերև

Sempervivum transcaucasicum Muirhead - Գառանդմակ անդրկովկասյան

**Cucurbitaceae - Դդմազգիներ**

Bryonia alba L. - Լոշտակ սպիտակ

**Cuscutaceae - Գաղձազգիներ**

Cuscuta cesattiana Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի

**Cyperaceae - Բոշխազգիներ**

Carex supina Willd. ex Wahlenb. - Բոշխ կարճահասակ

Scirpus sylvaticus L. - Շամբի անտառային

**Dipsacaceae - Ակքանազգիներ**

Cephalaria gigantea (Ledeb.) Bobr. - Ձիվան հսկայական

Scabiosa bipinnata C. Koch - Քոսքսուկ կրկնափետրաձև

Scabiosa caucasica Bieb. - Քոսքսուկ կովկասյան

**Eleagnaceae-Փշատազգիներ**

Hippophae ramnoides L.-Չիչխան դժնիկանման

**Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ**

Euphorbia helioscopia L. - Իշակաթնուկ արևատես

Euphorbia iberica Boiss. - Իշակաթնուկ վրացական /իբերիական/

Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեգիերի

**Fabaceae - Լոբազգիներ**

Anthyllis vulneraria L. - Վիրախոտ վիրավորված

Astracantha aurea (Willd.) Podlech - Գազ ոսկեզոծ

Astragalus incertus Ledeb. - Գազ անորոշ
Astragalus microcephalus Willd. - Գազ մանրագլխիկ
Lathyrus cyaneus (Stev.) C. Koch - Տափոլոռ
Lathyrus miniatus Bieb. ex Stev. - Տափոլոռ զինջարակագույն
Lotus caucasicus Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան
Medicago grandiflora (Grossh.) Vass. - Առվույտ խոշորածաղիկ
Medicago sativa L. - Առվույտ ցանովի
Melilotus officinalis (L.) Pall. - Իշառվույտ դեղատու
Oxytropis albana Stev. - Գառնառվույտ ալբանական
Securigera varia (L.) Lassen subsp. hirta (Bunge ex Boiss.) Czer. – Քարառվույտ երփներանգ
Trifolium alpestre L. - Երեքնուկ ալպյան
Trifolium ambiguum M. Bieb.  - Երեքնուկ նման
Trifolium canescens Willd. - Երեքնուկ ալեհեր
Trifolium pratense L. var geniculatum R. et F. - Երեքնուկ մարգագետնային
Trifolium repens L. - Երեքնուկ սողացող
Trifolium trichocephalum Bieb. - Երեքնուկ մազմզոտագլուխ
Vicia alpestris Stev. - Գյուլուլ, Վիկ լեռնային
Vicia sativa L. - Գյուլուլ, Վիկ ցանովի
Vicia tenuifolia Roth - Գյուլուլ, Վիկ  նեղատերև
Gentiana septemfida Pall. - Օձի դեղ, Բոգ յոթաբաժան

**Geraniaceae - Խորդենազգիներ**

Erodium cicutarum (L.) L'Her. - Ճայկտուց խնդամոլային
Geranium sylvaticum L. - Խորդենի անտառային

**Hypericaceae - Սրոհունդազգիներ**

Hypericum perforatum L. - Սրոհունդ խոցված

**Iridaceae - Հիրիկազգիներ**

Iris imbricata Lindl. - Հիրիկ կղմինդրային

**Juncaceae - Կնյունազգիներ**

Juncus effusus L. - Կնյուն բաժանված
Juncus filiformis L. - Կնյուն թելանման
Juncus inflexus L. - Կնյուն կռացած
Luzula spicata (L.) DC. - Փայլուկ հասկավոր
Luzula stenophylla Steud. - Փայլուկ նեղատերև

**Lamiaceae - Շրթնածաղկավորներ**

Ajuga chia Schreb. - Ճանկխոտ հիոսական
Ajuga genevensis L. - Ճանկխոտ ժնևյան
Ballota nigra L. - Պրասխ սև
Betonica orientalis L. - Թթվիճ արևելյան
Lamium album L. - Խուլ եղինջ սպիտակ
Leonurus cardiaca L. - Առյուծագի սովորական

Mentha longifolia (L.) Huds. - Անանուխ, Դաղձ երկարատերև
Nepeta betonicifolia C.A. Mey. - Կատվադաղձ կաստրոնատերև
Nepeta grandiflora Bieb. - Կատվադաղձ խոշորածաղիկ
Nepeta mussinii Spreng. - Կատվադաղձ Մուսինի
Origanum vulgare L. - Խնկածաղիկ սովորական
Salvia armeniaca (Bordz.) Grossh. - Եղեսպակ հայկական
Salvia verticillata L. - Եղեսպակ օղակաձև
Scutellaria orientalis L. - Սաղավարտուկ արևելյան
Stachys atherocalyx K. Koch - Աբեղախոտ քիստաբաժակ
Stachys balansae Boiss. et Kotschy ex Boiss. - Աբեղախոտ Բալանզայի
Stachys lavandulifolia Vahl - Աբեղախոտ փարանկամաշկատերև
Teucrium orientale L. - Լերդախոտ արևելյան
Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր
Thymus collinus Bieb. - Ուրց բլրակային
Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի
Thymus transcaucasicus Ronn. - Ուրց անդրկովկասյան
Ziziphora biebersteiniana (Grossh.) Grossh. - Ուրցադաղձ Բիբերշտեյնի
Ziziphora rigida (Boiss.) Stapf - Ուրցադաղձ կոշտ

**Malvaceae - Փիփերթազգիներ**

Malva neglecta Wallr. - Մոլոշ, Փիփերթ արհամարհված

**Onagraceae - Ապուզանազգիներ**

Epilobium hirsutum L. - Ապուզան թավոտ

**Papaveraceae - Կակաչազգիներ**

Papaver fugax Poir. - Կակաչ թռչող
Papaver orientale L. - Կակաչ արևելյան
Papaver persicum Lindl.- Կակաչ պարսկական

**Plantaginaceae - Ջղախոտազգիներ**

Plantago atrata Hoppe - Եզան լեզու սևացող
Plantago major L. - Եզան լեզու մեծ

**Poaceae - Հացազգիներ**

Agrostis capillaris L. - Ագրխոտուկ մազանման
Agrostis gigantea Roth - Դաշտախոտուկ, Ագրխոտուկ հսկայական
Alopecurus aequalis Sobol. - Աղվեսագի հարթ
Alopecurus aucheri Boiss. - Աղվեսագի Օշեի
Anthoxanthum odoratum L. - Խմրախոտ բուրավետ
Avena fatua L. - Վարսակ դատարկ
Briza elatior L. - Դողդողուն բարձր
Bromopsis erecta (Huds.) Fourr. - Բրոմոպսիս ուղիղ
Bromopsis villosula (Steud.) Holub - Բրոմոպսիս
Bromus scoparius L. - Ցորնուկ հուրանավոր
Bromus squarrosus L. - Ցորնուկ չռված

Catabrosa aquatica (L.) P. Beauv. - Կատաբրոզա ջրային, Ջրագնկոր
Catabrosella calvertii (Boiss.) Czerep. - Կատաբրոզելլա Կալվերտի
Dactylis glomerata L. - Ոզնախոտ հավաքված
Deschampsia cespitosa (L.) P. Beauv. - Մարգագետնախոտ, Դեշանախոտ ճմային
Elytrigia trichophora (Link) Nevski - Չաիր, Սեզ մազակիր
Eremopoa songarica (Schrenk) Roshev. - Անապատավլուկ ջունգարական
Festuca pratensis Huds. - Շյուղախոտ մարգագետնային
Festuca valesiaca Gaudin - Շյուղախոտ վալլիսյան
Festuca karabaghensis Musajev - Շյուղախոտ
Helictotrichon adjaricum (Albov) Grossh. - Տիվարսակ աջարական
Helictotrichon pubescens (Huds.) Besser - Տիվարսակ խավոտ
Hordeum bulbosum L. - Գարի սոխուկավոր
Hordeum violaceum Boiss. et Huet - Գարի մանուշակագույն
Koeleria albovii Domin subsp. albovii - Բարակոտնուկ Ալբովի
Milium schmidtianum K. Koch - Վայրի կորեկ Շմիդտի
Phalaroides arundinacea (L.) Rauschert - Երկծոպիկ եղեգանման
Phleum pratense L. - Սիզախոտ մարգագետնային
Phleum phleoides (L.) H. Karst. - Սիզախոտ սիզախոտանման
Phragmites australis (Cav.) Trin. ex Steud. - Եղեգ հարավային, Եղեգ սովորական
Poa angustifolia L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ նեղատերև
Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ սոխուկավոր
Poa longifolia Trin. - Դաշտավլուկ երկարատերև
Sesleria phleoides Steven ex Roem. et Schult. - Սեսլերիա սիզախոտանման
Stipa pennata L. - Սմբուլ, Փետրախոտ փետրավոր
Zingeria pisidica (Boiss.) Tutin - Ցինգերիա պիսիդիական

**Polygonaceae - Մատիտեղազգիներ**

Bistorta carnea (C. Koch) Kom. – Մատիտեղ մանդիկ
Oxyria digyna (L.) Hill - Թթվախոտ զսպանակավոր
Polygonum alpinum All. - Մատիտեղ լեռնային
Polygonum aviculare L. - Մատիտեղ ճնճղուկի
Rumex acetosa L. – Ավելուկ սովորական
Rumex acetoselloides Bal. - Ավելուկ ավելուկանման
Rumex crispus L. - Ավելուկ գանգուր

**Primulaceae - Գնարբուկազգիներ**

Primula macrocalyx Bunge - Գնարբուկ խոշորաբաժակ

**Ranunculaceae - Գորտնուկազգիներ**

Caltha polypetala Hochst. - Ոսկեծաղիկ բազմածաղկաթերթային
Thalictrum minus L. - Քնծմնծուկ փոքր

**Rhamnaceae - Դժնիկազգիներ**

Rhamnus cathartica L. - Դժնիկ լուծողական

**Rosaceae - Վարդազգիներ**

Agrimonia eupatoria L. - Երեսնակ սովորական
Alchemilla diversipes Juz. - Գայլաթաթ տարակոթուն
Alchemilla grossheimii Juz. - Գայլաթաթ Գրոսհեյմի
Alchemilla persica Rothm. - Գայլաթաթ պարսկական
Alchemilla retinervis Bus. - Գայլաթաթ ցանցաջղավոր
Cotoneaster integerrimus Medik. - Չմենի ամբողջաեզր
Cotoneaster saxatilis Pojark. - Չմենի ժայռային
Crataegus meyeri Pojark. - Ալոճ, Սզնի Մեյերի
Crataegus orientalis Pall. ex Bieb. - Ալոճ, Սզնի արևելյան
Filipendula ulmaria (L.) Maxim. - Փրփրուկ թեղանման
Fragaria viridis (Duch.) Weston - Ելակ կանաչ
Malus orientalis Uglitzk. - Խնձորենի արևելյան
Potentilla argentea L. – Մատնունի արգենտի
Potentilla argaea Boiss. et Bal. - Մատնունի արգեա
Potentilla canescens Bess. - Մատնունի գորշավուն
Potentilla recta L. - Մատնունի բարձր
Prunus divaricata Ldb. - Սալոր, Շլոր
Pyrus caucasica Fed. - Տանձենի կովկասյան
Pyrus pseudosyriaca Gladkova x P. salicifolia Pall. - Տանձենի կեղծ-սիրիական
Pyrus salicifolia Pall. - Տանձենի ուռենատերև
Rosa iberica Stev. ex Bieb. - Մասրենի վրացական
Rosa spinosissima L. - Մասրենի առատափուշ
Rosa svanetica Crep. - Մասրենի սվանեթյան
Spiraea crenata L. - Ասպիրակ աղեղնեզր
Spiraea hypericifolia L. - Ասպիրակ արևքուրիկատերև

**Rubiaceae - Տորոնազգիներ**

Asperula prostrata (Adams) C. Koch - Գետնաստղ գետնատարած
Galium consanguineum Boiss. - Մակարդախոտ

**Salicaceae - Ուռենազգիներ**

Salix elbursensis Boiss. - Ուռենի էլբուրսյան
Salix excelsa S. G. Gmel. - Ուռենի բարձր
Salix triandra L. - Ուռենի եռառէջ

**Saxifragaceae - Քարբեկազգիներ**

Saxifraga cartilaginea Willd. - Քարբեկ կրճկային
Saxifraga cimbalaria L.-Քարբեկ ցնծղավոր
Saxifraga exarata Vill. - Քարբեկ կոտրվող
Saxifraga sibirica - Քարբեկ սիբիրյան

**Scrophulariaceae - Խլածաղկազգիներ**

Scrophularia olympica Boiss. - Խլածաղիկ օլիմպիական

Veronica gentianoides Vahl - Բերենիկե բոգային

**Solanaceae - Մորմազգիներ**

Hyoscyamus niger L. - Բանգի սև

**Urticaceae - Եղինջազգիներ**

Urtica dioica L. - Եղինջ երկտուն

**Valerianaceae - Կատվախոտազգիներ**

Valeriana alliariifolia Adams - Կատվախոտ սխտորուկատերև

## Տարածքում հանդիպող բուսատեսակների լուսանկարներ



Hippophae ramnoides



Crataegus meyeri



Rosa iberica



Astragalus microcephalus



Salix excelsa



Crataegus orientalis



Euphorbia sequierana



Saxifraga cimbalaria



Rumex acetosa



Filipendula ulmaria



Iris imbricata



Prunus divaricata

Ֆլորայում գերակշռում են ծածկասերմերը՝ որոնցից երկշաքիլավորների դասի ներկայացուցիչները կազմում են 206 տեսակ, միաշաքիլավորները ներկայացված են 48 տեսակով, պտերանմանները և ծիածետայինները՝ 2 և մերկասերմերը՝ 1 տեսակով:

Դաստակերտի հետազոտվող հանքավայրի տարածքի ֆլորայի կարգաբանական միավորները.

| Խոշոր կարգաբանական միավորները | | | Ընտանիքնե քանակը | Ցեղերի քանակը | Տեսակների քանակը |
|---|---|---|---|---|---|
| Թագավորու | Բաժին | Դաս | | | |
| | | Ձիաձետայիններ | 1 | 1 | 2 |
| | Պտերանմաններ | Պտերայիններ | 2 | 2 | 3 |
| | Մերկասերմեր | Փշատերևավորներ | 1 | 1 | 1 |
| | Ծածկասերմեր | Երկշաքիլավորներ | 34 | 120 | 206 |
| | | Միաշաքիլավորներ | 6 | 22 | 48 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 44 | 146 | 260 |

Ամենաշատ տեսակներով աչքի են ընկնում Բարդածաղկավորները՝ 52 տեսակ, Հացազգիները՝ 36 տեսակ, Վարդազգիները՝ 25 տեսակ, Շրթնածաղկավորները՝ 24 տեսակ, Լոբազգիները 22 տեսակ և այլն: Ցեղային առումով ևս բազմազանությունը նկատվում է վերոնշված ընտանիքներում:

Դաստակերտի հանքի հետազոտման ենթակա տարածքի ֆլորայի ամենաշատ տեսակներ պարունակող 7 ընտանիքների սպեկտրը.

| **N** | **Ընտանիքներ** | **Տեսակների քանակը** | **Ցեղերի քանակը** |
|---|---|---|---|
| 1 | Բարդածաղկավորներ-Asteraceae | 52 | 30 |
| 2 | Հացազգիներ-Poaceae | 36 | 25 |
| 3 | Վարդազգիներ-Rosaceae | 25 | 12 |
| 4 | Շրթնածաղկավորներ-Lamiaceae | 24 | 14 |
| 5 | Լոբազգիներ-Fabaceae | 22 | 12 |
| 6 | Խաչածաղկավորներ-Brassicaceae | 11 | 8 |
| 7 | Մեխակազգիներ-Caryophyllaceae | 7 | 6 |

## Ֆլորայի կենսաբանական սպեկտրը

Դաստակերտի հանքի ուսումնասիրվող տարածքում բույսերի տարբեր կենսաձևերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝

Ծառեր – 9 տեսակ,

Թփեր - 11 տեսակ,

Կիսաթփեր և կիսաթփիկներ - 8 տեսակ,

Բազմամյա խոտաբույսեր – 199 տեսակ,

Երկամյաներ – 11 տեսակ,

Միամյաներ – 24 տեսակ:

Միամյա-երկամյաներ – 8 տեսակ:

**Բուսատեսակների էկոլոգիական առանձնահատկությունները**

Ինչպես ցույց են տալիս տեսակների այս կամ այն սուբստրատին հարմարողականության տվյալները՝ հետազոտվող տարածքում հանդիպող բուսատեսակները բաժանվում են հետևյալ խմբերի՝ քսերոֆիտներ կամ չորասերներ, քսերո-մեզոֆիտներ կամ չորա-խոնավասերներ, մեզոֆիտներ կամ խոնավասերներ և հիդրոֆիտներ կամ ջրասերներ:

Տարածքի բուսատեսակների զգալի մասը քսերո-մեզոֆիտներ և մեզո-քսերոֆիտներ են: Սակայն գետակների հուներում և ափերի երկարությամբ բավականին մեծ թիվ են կազմում հիդրոֆիտները:

**ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները**

Սյունիքի մարզում հանդիպող 190 բուսատեսակ գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Դրանցից են ՝

1. Գազ զանգեզուրի -Astragalus sangezuricus Boriss. (EN)
2. Գնդապտուղ կասպիական - Physopthychis capsica (Hablitz) VV Botschantz. (EN)
3. Բոշխ մանրագլխիկ -Carex capitellata L. (EN)
4. Տերեփուկ էլբրուսյան -Centaurea elbrusensis Boiss&Buhse (EN)
5. Տերեփուկ Շելկովնիկովի -Centaurea schelkovnikovii Sosn. (CR)
6. Խոզնափուշ ղարադաղի -Cousinia qaradaghensis Rech. (CR)
7. Ձագախոտ կարմրակապույտ -Erysimum lilacinum E. Steinb. (EN)
8. Կտավախոտ մեղրու -Linaria megrica Tzvelev (EN)
9. Տանձենի Ռադդեի -Pyrus raddeana Woronow (EN)
10. Տանձենի Վորոնովի -Pyrus voronovii Rubtzov (EN)

11. Վարդակակաչ Սոսնովսկու -Tulipa sosnovskyi Achverdov&Mirzoeva (EN) և այլն:

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում իրականացված դաշտային այցելությունների ընթացքում ՀՀ կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

## Տեսակների տնտեսական նշանակությունը, ուսումնասիրվածության աստիճանը, ֆլորայի և բուսականության վիճակը

Ուսումնասիրվող տարածքում հանդիպում են մարդու համար օգտակար մի շարք բուսատեսակներ: Ըստ նախնական տվյալների՝ տարածքում որոշակի տարածում ունեն ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական և գեղազարդային նշանակության մի շարք տեսակներ:

**Ուտելի բույսեր**

Աստղագազար արևելյան (Astrodaucus orientalis), Շուշանբանջար ոսկեզոծ

(Chaerophyllum aureum), Ելակ կանաչ (Fragaria viridis), Սիբեխ սովորական (Falcaria vulgaris), Ծտապաշար կամ Հովվամաղախ (Capsella bursa- pastoris), Ուրց Կոչիի (Thymus kotschyanus), Շլորենի (Prunus divaricata), Սզնի Մեյերի (Crataegus meyeri), Խնձորենի արևելյան (Malus orientalis), Տանձենի կովկասյան (Pyrus caucasica), Ավելուկ գանգուր (Rumex crispus), Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare) և այլ տեսակներ:

**Դեղաբույսեր**

Ձիաձետ դաշտային (Equisetum arvense), Հազարատերևուկ սովորական (Achillea millefolium), Ջիվան հսկայական (Cephalaria gigantea), Լոշտակ սպիտակ (Bryonia alba), Իշառվույտ դեղատու (Melilotus officinalis), Արոհունդ խոցված (Hypericum perforatum), Ճարճատուկ սովորական (Cichorium intybus), Դժնիկ լուծողական (Rhamnus cathartica), Լերդախոտ ալեհեր (Teucrium polium) և այլն:

**Կերային բույսեր**

Առվույտ ցանովի (Medicago sativa), Երեքնուկ ալպյան (Trifolium alpestre), Երեքնուկ նման (Trifolium ambiguum), Երեքնուկ մարգագետնային (Trifolium pratense), Տափոլոռ զինջարակագույն (Lathyrus miniatus), Սիզախոտ մարգագետնային (Phleum pratense), Դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa), Դաշտավլուկ երկարատերև (Poa longifolia) և այլն: